

25 Years of Partnership

World Bank – Republic of Armenia



25-ամյա համագործակցություն

Համաշխարհային բանկ - Հայաստանի Հանրապետություն



For 25 years the staff of the institutions that make up the World Bank Group have worked side-by-side with the government and people of Armenia to improve lives and livelihoods, to advance economic growth, and to reduce poverty. We believe that the story of our partnership is best told through the eyes of Armenians from across the country, telling their own experiences, and now showcased in this book. We look forward to working with Armenia for a bright and vibrant future for everyone.

World Bank Group, Armenia team

*25 տարի շարունակ Համաշխարհային բանկի խումբը
կազմող հաստատությունների անձնակազմն աշխատել է
կառավարության և հայ ժողովրդի հետ կողք-կողքի՝ բարելավելու
կյանքն ու կենսամակարդակը, նպաստելու տնտեսական աճին
և նվազեցնելու աղքատությունը:*

*Մենք հավատում ենք, որ մեր համագործակցության
պատմությունը լավագույնս ներկայացվում է այն
փորձառությամբ ու ազդեցությամբ, որոնք զգացել են հայ
մարդիկ: Այս գիրքն ամփոփում է այդ պատմությունները:
Մենք առաջիկայում ևս պատրաստ ենք աշխատել Հայաստանի
հետ յուրաքանչյուրի վառ ապագայի համար:*

Համաշխարհային բանկի խումբ, Հայաստանի թիմ

Renovated Courthouses Give New Meaning to Justice

February 5, 2007



The First Instance Community Courthouse in the center of Yerevan is so dilapidated, you can see through the rundown concrete landings as you climb its perilous stairs.

So it is no surprise that one of the court's nine judges prefers to conduct 95% of his sessions - trying civil, administrative and even criminal cases - in his private office.

"There's an agreement among judges that unless the case is big, has media attention or is of public interest, we try the cases in our offices," he says.

A World Bank loan to the Ministry of Justice aims to put an end to the sub-standard conditions and imperfect legal practices that give courts a bad name in Armenia.

By the end of the [Judicial Reform Project](#), in June 2006, 10 courthouses will have been extensively renovated and an additional two built from scratch. The physical overhaul of courthouses is a decisive first step towards improving the quality of justice.

Moreover, "the conditions of a courthouse have drastic psychological and fairness implications for all involved - judges, staff and citizens," says Chief Judge Jora Vardanyan, chairman of the Center Community court.

"When a citizen enters a court house, he or she should understand from the very entrance that this is the place where justice will be done," he says.

"When you enter such a building you have more hope," comments Susanna Haroutyan, a woman in her 40s resting in the public square in front of the new stately courthouse. "Of course, justice depends on the people, but the building changes the mood and the approach to justice," she says.

Դատարանների վերանորոգված շենքերն արդարադատությանը նոր իմաստ են հաղորդում

Փետրվարի 5, 2007

Երևանի Կենտրոն համայնքի առաջին ատյանի դատարանի շենքն այնքան խարխված է, որ վտանգավոր աստիճաններով բարձրանալիս վթարային բեռնոնե աստիճանահարթակների միջով հնարավոր է տեսնել:

Ուստի զարմանալի չէ, որ դատարանի 9 դատավորներից մեկը նախընտրում է իր առանձնասենյակում անցկացնել իր նիստերի 95 տոկոսը՝ քննելով քաղաքացիական, վարչական և անգամ քրեական գործեր:

«Դատավորները պայմանավորվածություն ունեն, որ եթե գործը մեծ չէ, լրատվամիջոցների ուշադրությունը չի վայելում կամ հասարակական հնչեղություն չունի, մենք այդ գործերը կարող ենք քննել մեր գրասենյակներում», - ասում է նա:

Արդարադատության նախարարությանը Համաշխարհային բանկի տրամադրած վարկը նպատակ ունի Հայաստանի դատարանների անունն արատավորող ոչ բավարար պայմաններին և իրավական անկատար գործելակերպին վերջ դնել:

Դատաիրավական բարեփոխումների ծրագրի ավարտին՝ 2006 թ. հունիսին, 10 դատարանի շենք հիմնանորոգված և երկուսն էլ ամբողջությամբ նոր կառուցված կլինի: Դատարանների ֆիզիկական վերափոխումը արդարադատության որակի բարելավմանն ուղղված առաջին վճռական քայլն է:

«Դատարանի շենքային պայմանները լուրջ հոգեբանական և արդարացիության ազդեցություն ունեն ներգրավված բոլոր անձանց՝ դատավորների, անձնակազմի և քաղաքացիների վրա», - ասում է Երևանի կենտրոն համայնքի դատարանի նախագահ, գլխավոր դատավոր Ժորա Վարդանյանը:

«Երբ քաղաքացին մուտք է գործում դատարանի շենք, նա պետք է հենց մուտքից հասկանա, որ սա այն վայրն է, որտեղ արդարադատությունը կկայանա», - ասում է նա:

«Այսպիսի շենք մտնելիս հույսն ավելի մեծ է լինում», - մեկնաբանում

է Սուսաննա Հարությունյանը, 40-ի շուրջ մի տիկին, որը հանգստանում է դատարանի նոր շենքի առջևում գտնվող հանրային հրապարակում: «Իհարկե արդարադատությունը մարդկանցից է կախված, սակայն շենքը փոխում է տրամադրությունը և մոտեցումն արդարադատությանը», - ասում է նա:





In 2005, there were 202 schools in Armenia, in urban areas outside of the capital of Yerevan, that lacked heating-leaving more than 87,000 students in the cold.

The US\$15 million **Armenia Urban Heating Credit Program** - 80% of which is co-financed by the World Bank - began implementation in 2006 to bring heat to urban areas, and continued until 2010. The Renewable Energy and Energy Efficiency Fund, which is the implementing agency for the Urban Heating Project, rehabilitated the heating systems of 100 schools in 47 towns outside of Yerevan.

Gas as a More Cost-Effective Solution

Preliminary results show that schools gain significantly - with savings of 30-50% in heating expenses - from the use of gas-based heating.

"Last year we were spending some AMD 900,000 on electricity," said Arusyak Muradyan, Principal of School No. 4 in Echmiadzin. "For several years we were working only 5 months a year, and the remaining 4-5 months we were paralyzed. We could hardly hold class before running home, resulting in 30 minute classes. Now the children feel like students - this generation is rescued from the cold."

Selection of Schools

The eligibility of urban schools to receive financing is determined based on the availability of gas supplies in the area, the technical state of the school building, and adequacy of engineering design. The selection of schools is based on the cost-effectiveness of investments per student; schools need to fall below a cost effectiveness threshold of US\$120 per student to be selected.

Կրթությունը փրկված է ցրտից

Սեպտեմբերի 23, 2008

2005 թ.-ին մայրաքաղաք Երևանից դուրս գտնվող քաղաքային վայրերում չէր ջեռուցվում 202 դպրոց՝ շուրջ 87,000 աշակերտի մատնելով ցրտի:

«Հայաստանի քաղաքային ջեռուցում վարկային ծրագիրը» (ԲԶԾ), որի 80 տոկոսը համաֆինանսավորվում է Համաշխարհային բանկի կողմից, սկսեց իրականացվել 2006 թ.-ին քաղաքային վայրեր ջեռուցություն բերելու նպատակով և շարունակվեց մինչև 2010 թ.-ը: Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը, որը «Քաղաքային ջեռուցում» ծրագիրն իրականացնող գործակալությունն է, Երևանից դուրս գտնվող 47 քաղաքում վերականգնել է 100 դպրոցի ջեռուցման համակարգերը:

Գազը՝ ծախսարդյունավետ լուծում

Ըստ նախնական արդյունքների՝ դպրոցներն զգալիորեն շահում են գազով ջեռուցվելու դեպքում՝ խնայելով ջեռուցման ծախսերի 30-50 տոկոսը:

«Անցյալ տարի էլեկտրաէներգիայի վրա ծախսվում էր մոտավորապես 900,000 ՀՀ դրամ», - ասաց Էջմիածնի թիվ 4 դպրոցի տնօրեն Արուսյակ Մուրադյանը: «Մի քանի տարի շարունակ տարվա ընթացքում աշխատում էինք միայն 5 ամիս, իսկ մնացած 4-5 ամիսներին կաթվածահար լինում: Հազիվ էինք կարողանում դասարանը պահել տուն փախչելուց, ինչի հետևանքով դասերը տևում էին 30 րոպե: Այժմ երեխաներն իրենց աշակերտի պես են զգում: Այս սերունդը փրկված է ցրտից»:

Դպրոցների ընտրությունը

Քաղաքային դպրոցների՝ ֆինանսավորում ստանալու իրավունքը որոշվում է տարածքում գազի առկայությամբ, դպրոցի շենքի տեխնիկական վիճակով և ինժեներական նախագծի համարժեքությամբ: Դպրոցների ընտրությունը հիմնված է մեկ աշակերտի հաշվով

ներդրման ծախսարդյունավետության վրա: Դպրոցները պետք է մեկ աշակերտի հաշվով 120 դոլար կազմող ծախսարդյունավետության շեմից ներքև գտնվեն, որպեսզի ընտրվեն:



From Rags to Riches: New Medical Center Changes the Face of Healthcare in Kotayk Region

January 14, 2010



In the framework of Armenia's **Health System Modernization Project** supported by the World Bank, Hrazdan's medical system has transformed from a wasteful and ineffective cluster of uncoordinated units into what is now a modern, centralized, renovated and well-equipped medical center – the first of its kind for this region of Armenia.

The central city of the Kotayk region, Hrazdan had a hospital similar to most regional hospitals in post-Soviet Armenia – with dilapidated infrastructure,

outdated technology, and obsolete equipment. The building had not seen any renovation since 1987 when it was constructed. To make matters worse, the city's then Central Regional Hospital was broken down to 12 separate administrative units in 1997. Lack of coordination among them resulted in ineffective and poor service delivery.

No longer. Once a chilling example of a medical center, it is now one of the "riches" of the country's healthcare system. As part of the Project, the Center now houses the city's hospital, clinic, and maternity hospital – all in one spacious four-departmental compound, with the community medical college soon to move under its roof as well.

Arshaluys Begyan, 75, from Hrazdan has been seeking regular medical care for years as she suffers from hypertonia. "We have a great hospital now; there is no comparison with the old building. Even the attitudes of nurses and doctors have improved."



Նոր բժշկական կենտրոնը փոխում է առողջապահության դեմքը Կոտայքի մարզում

Հունվարի 14, 2010

Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացված «Հայաստանի առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի» շրջանակում Հրազդանի բժշկական համակարգը վերափոխվել է՝ չտնտեսող և անարդյունավետ, չհամակարգված միավորների կլաստերից դառնալով արդի, կենտրոնացված, վերանորոգված և վերազինված բժշկական կենտրոն, որն իր տեսակով առաջինն է Հայաստանի այս մարզում:

Հրազդանը՝ լինելով Կոտայքի մարզի կենտրոնական քաղաքը, ուներ հետխորհրդային Հայաստանի մարզային հիվանդանոցների մեծ մասին նման հիվանդանոց՝ կիսախարխուլ ենթակառուցվածք, հնացած տեխնոլոգիաներ և մաշված սարքավորումներ: Ծնեքը 1987 թ.-ին կառուցելուց ի վեր երբևէ չէր վերանորոգվել: Վիճակը վատթարացել է 1997 թ.-ին, երբ Կենտրոնական մարզային հիվանդանոցը բաժանվել էր 12 առանձին վարչական միավորի: Դրանց միջև համակարգման բացակայությունը հանգեցրել էր անարդյունավետ և վատ ծառայությունների մատուցման:

Այլևս սակայն այդպես չէ: Բժշկական կենտրոնը վերափոխվել է՝ դառնալով երկրի առողջապահական համակարգի հարստություններից մեկը: Ծրագրի շրջանակում այժմ կենտրոնում են տեղակայված քաղաքի հիվանդանոցը, կլինիկան և ծնոդատունը, որի հարկի տակ շուտով կտեղափոխվի նաև համայնքի բժշկական քոլեջը:

Հրազդանից 75-ամյա Արշալույս Բեգյանը տարիներ շարունակ կանոնավոր բժշկական խնամքի է դիմել, քանի որ տառապում է հիպերտոնիայով: «Այժմ հիանալի հիվանդանոց ունենք, անհամեմատելի է հին շենքի հետ: Փոխվել է անգամ բժիշկները և բուժքույրերի վերաբերմունքը», -ասում է նա:



Bringing Roads to Life

February 2, 2010

The roads linking villages to the main highways are often called “lifeline roads” in Armenia. They are vital for the communities located dozens and hundreds of kilometers away from urban areas. With a significant part of them last rehabilitated in the Soviet era, the lifeline roads have been left in desperately poor conditions since then.

Mnatsakan Melkonyan from Haykavan village of Shirak region: “The distance from our village to Gyumri is 10 km; it used to take an hour to pass it by car. Once, a woman nearly gave birth on the way to the hospital. Now it is excellent: one can reach Gyumri in 10 minutes.”

Supported by the World Bank, the **Lifeline Roads Improvement Project** (LRIP) targeted the rehabilitation of rural roads. It was prepared in the beginning of 2009 on an accelerated procedure basis contributing to the efforts of Armenia to face the global economic crisis.

LRIP has ended the geographic and economic isolation of the rural communities from the regions' central cities and the capital city of Yerevan

by connecting them to the main highways via safe, speedy and modern roads.

LRIP project created jobs in rural areas where many people lost them following the economic crisis. An estimated 7,650 people per month were involved in community works.

Sirak Ohanyan from Aghavndzor village of Vayots Dzor region is upbeat with the employment opportunity at home: “It’s good to be employed in my own region. I used to leave for Russia for seasonal works. The salary we get for this job is almost equal to the one earned in Russia. In addition, I am with my family; I sleep and eat in my home.”

The Lifeline Roads Improvement Project has been implemented in 7 regions of Armenia. The Project envisaged rehabilitating 100 km of rural roads. Due to savings, additional 18 km have been significantly improved. As a result, 44 rural communities and around 75,000 people, as immediate beneficiaries, are now connected to main highways and towns.



Ճանապարհների կենսականության վերականգնումը

Փետրվարի 2, 2010



Գյուղերը հիմնական մայրուղիներին միացնող ճանապարհները Հայաստանում հաճախ անվանվում են «կենսական նշանակության ճանապարհներ»։ Դրանք կենսական նշանակություն ունեն քաղաքային վայրերից տասնյակ և հարյուրավոր կիլոմետր հեռավորության վրա գտնվող համայնքների համար։ Վերջին անգամ վերանորոգվելով խորհրդային դարաշրջանում՝ կենսական նշանակության ճանապարհների մեծ մասը դրանից հետո անհուսալի վատ վիճակում էր թողնվել։

«Մեր գյուղից մինչև Գյումրի հեռավորությունը 10 կմ է, Նախկինում մեկ ժամ էր պահանջվում մեքենայով այն անցնելու համար։ Մի անգամ մի կին քիչ էր մնում հիվանդանոցի ճանապարհին ծննդաբերել։ Հիմա գերազանց է։ 10 րոպեում կարելի է Գյումրի հասնել», -ասում է Շիրակի մարզի Հայկավան գյուղից Մնացական Մելքոնյանը։

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող **«Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագիրը»** (ԿՆԾԲՇ) նպատակաուղղված է գյուղական ճանապարհների վերականգնմանը։ Այն արագացված ընթացակարգով նախապատրաստվել է 2009 թ.-ի սկզբին՝ նպաստելով համաշխարհային տնտեսական ճգնաժամին դիմակայելու Հայաստանի ջանքերին։

ԿՆԾԲՇ-ն վերջ է դրել մարզկենտրոններից և մայրաքաղաք Երևանից

գյուղական համայնքների աշխարհագրական և տնտեսական մեկուսացմանը՝ ապահով, արագընթաց և ժամանակակից ճանապարհներով դրանք միացնելով հիմնական մայրուղիներին։

Ծրագրով աշխատատեղեր են ստեղծվել գյուղական վայրերում, որտեղ մարդիկ տնտեսական ճգնաժամից հետո կորցրել էին աշխատանքը։ Ըստ հաշվարկների՝ համայնքային աշխատանքներում ամսական ներգրավվել է 7,650 մարդ։

Վայոց Ձորի մարզի Աղավնաձոր գյուղից Սիրակ Օհանյանը ոգևորված է տանն աշխատանքի հնարավորությամբ։ «Լավ է իմ մարզում աշխատելը։ Նախկինում Ռուսաստան էի մեկնում սեզոնային աշխատանքների։ Այս աշխատանքի դիմաց ստացվող աշխատավարձը գրեթե հավասար է Ռուսաստանում վաստակածին։ Բացի այդ, ընտանիքիս հետ եմ, քնում և ուտում եմ իմ տանը»։

«Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագիրը» իրականացվել է Հայաստանի 7 մարզում։ Ծրագրով նախատեսվում էր հիմնանորոգել 100 կմ գյուղական ճանապարհներ։ Խնայողությունների հաշվին ևս 18 կմ զգալիորեն բարելավվել է։ Արդյունքում 44 գյուղական համայնք և շուրջ 75,000 մարդ որպես անմիջական շահառու այժմ միացած են հիմնական մայրուղիներին և քաղաքներին։

5

Step by step: Restoring the Diverse Mosaic of Rural Economy

February 26, 2010

There are about 340,000 rural farms in Armenia. However, farmers have trouble optimizing their yields because they lack regular access to markets, professional advice, and the necessary funding for infrastructure, seeds, and fertilizers. The World Bank-supported **Rural Enterprise and Small-Scale Commercial Agriculture Development Project (RESCAD)** is making progress – step-by-step – in addressing these needs.



Step 1: A Village United Can Break a Log

The problems of Lorut are as old as the village road. One of these problems is the main water system, which was built in 1964. To deal with these problems, community councils were created under the Community Economic Development (CED) component of the RESCAD Project. The CED supported much-needed investments in 141 communities across Armenia – investments ranging from agricultural machinery and drinking water, to gasification, milk collection, rural transport, and protection from hail.

Step 2: Don't Count Your Chickens Before They Hatch

The village of Lusaghbyur is long famous for sheep breeding and traditional carpet making. Lusaghbyur has restored the old tradition of carpet weaving, and wool processing is now in demand. Continuing this resurgence, a carpet-weaving enterprise, which employs 30 women, was founded with the support of a competitive grant provided by RESCAD's Rural Small and Medium Enterprise component.

Step 3: You Reap What You Sow

It has been estimated that as much as 17 percent of the wheat harvest is lost in Armenia due to agricultural machinery breakages. Seed certification, quality control, and review of breeds are all essential for a rich harvest. The Seed Market and Legislation component of RESCAD has provided the necessary furniture and equipment to the Seed Agency, sent staff abroad for training, and founded seed labs in 5 regions of Armenia.

Քայլ առ քայլ. գյուղական տնտեսության բազմազան խճանկարի վերականգնումը

Փետրվարի 26, 2010

Հայաստանում կա շուրջ 340,000 գյուղացիական տնտեսություն: Սակայն գյուղացիները դժվարանում են ավելի շատ բերք ստանալ, քանի որ շուկաները նրանց համար կանոնավորապես հասանելի չեն, մասնագիտական խորհուրդները, ենթակառուցվածքի, սերմացուների և պարարտանյութերի համար անհրաժեշտ ֆինանսավորումը բացակայում է: Համաշխարհային բանկի օժանդակությամբ իրականացվող **«Գյուղական ձեռնարկությունների և փոքրամասշտաբ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագիրը»** առաջընթաց է ապահովում՝ քայլ առ քայլ արձագանքելով այս կարիքներին:

Քայլ 1. «Գյուղ կանգնի, գերան կկտրի»

Լորուտի խնդիրները գյուղի ճանապարհի պես հին են: Այդ խնդիրներից մեկը հիմնական ջրամատակարարման համակարգն է, որը կառուցվել է 1964 թ.: Այդ խնդիրների կարգավորման համար այս ծրագրի համայնքների տնտեսական զարգացման (ՋՏ) բաղադրիչի ներքո ստեղծվեցին համայնքային խորհուրդներ: ՋՏ-ն Հայաստանի 141 համայնքում օժանդակեց չափազանց անհրաժեշտ ներդրումներին, որոնք ընդգրկում էին գյուղատնտեսական մեքենասարքավորումներից և խմելու ջրից մինչև գազի ֆիկացում, կաթի հավաքում, գյուղական տրանսպորտ և կարկտից պաշտպանություն:

Քայլ 2. «Ճտերն աշնանն են հաշվում»

Լուսադեյուր գյուղը տարիներ շարունակ հայտնի է ոչխարաբուծությամբ և գորգագործությամբ: Լուսադեյուրը վերականգնել է գորգերի հյուսման հին ավանդույթը և բրդի մշակումն այժմ պահանջարկ է վայելում: Շարունակելով այս վերածնունդը՝ ծրագրի գյուղական փոքր և միջին ձեռնարկությունների բաղադրիչի միջոցով տրամադրված մրցակցային դրամաշնորհի օժանդակությամբ հիմնվեց գորգագործական ձեռնարկություն, որտեղ 30 կին է աշխատում:

Քայլ 3. «Ինչ ցանես, այն էլ կհնձես»

Ըստ հաշվարկների՝ Հայաստանում ցորենի բերքի մինչև 17 տոկոս կորուստ է գրանցվում՝ գյուղատնտեսական մեքենասարքավորումների խափանումների պատճառով: Սերմերի հավաստագրումը, որակի հսկողությունը և սորտերի թարմացումը կենսական նշանակություն ունեն հարուստ բերքի համար: Այս ծրագրի՝ սերմերի շուկայի և օրենսդրության բաղադրիչի շրջանակում անհրաժեշտ կահույք ու սարքավորումներ են տրամադրել սերմերի գործակալությանը, աշխատակիցները գործուղվել են արտասահման վերապատրաստման և Հայաստանի 5 մարզում հիմնվել են սերմերի լաբորատորիաներ:



25-ամյա համագործակցություն
Համաշխարհային բանկ - Հայաստանի Հանրապետություն



Many poor families in Armenia face the daily struggle to heat their households given the high costs of connecting to gas networks or buying expensive heating equipment that can cost around US\$550, or about two months of income. To help solve this problem, the World Bank and the Global Partnership on Output Based Aid (GPOBA) partnered to fund a program within the scope of the [Urban Heating Project](#) that provided targeted capital grants to thousands of families for connecting their apartments to the gas network and installing a gas heater.

Gas-based heating offers a clean, efficient, and low-cost heating solution to poor, urban households. “We used to burn wood before, but gas is so much cleaner and convenient. It’s a great improvement in our life and it has eased our daily problems,” explains Sara Badalyan, a housewife residing in a small, one-room apartment in Masis town (Ararat region) with her husband and 18-year-old daughter.

Armenia has undertaken a series of structural reforms in its energy sector since 1995, among which it restored the gas supply and connected more than 100,000 new gas customers in recent years. Although the urban heating strategy estimated that gas-based heating is the least-cost heating solution, access to it was low among poor households.

According to Ani Balabanyan, Project Task Team Leader, “To help these families adopt safe, affordable, gas-based heating solutions, the Government of Armenia requested US\$3.1 million in GPOBA support, complemented by US\$3 million in funding from one of the components of the World Bank-financed Urban Heating Project. Despite the recent rise in gas prices, by the time the Project closes, a significant share of poor urban households will have access to safe and affordable gas supply.”

Քաղաքային աղքատների ջեռուցման խնդրի լուծումը

Հունիսի 1, 2010

Հայաստանի բազմաթիվ աղքատ ընտանիքներ ամենօրյա պայքար են մղում իրենց տները ջեռուցելու համար՝ հաշվի առնելով գազի ցանցերին միանալու մեծ ծախսերը կամ ջեռուցման թանկարժեք սարքավորումներ գնելը, որոնց արժեքը կարող է կազմել շուրջ 550 ԱՄՆ դոլար կամ մոտ երկու ամսվա եկամուտ: Այս խնդրի լուծմանն օգնելու համար Համաշխարհային բանկի և Արդյունքահենք օգնության համաշխարհային գործընկերության (ԱՕՀԳ) համագործակցությամբ «Քաղաքային ջեռուցում» ծրագրի շրջանակում ֆինանսավորվեց մի ծրագիր, որով թիրախավորված կապիտալ դրամաշնորհներ տրամադրվեցին հազարավոր ընտանիքների՝ իրենց բնակարանները գազի ցանցին միացնելու և գազի վառարան տեղադրելու համար:

Գազով ջեռուցումը մաքուր, արդյունավետ և էժան լուծում է աղքատ քաղաքային տնային տնտեսությունների համար: «Մենք նախկինում փայտ էինք վառում, սակայն գազը շատ ավելի մաքուր և հարմար է: Այն զգալիորեն բարելավել է մեր կյանքը և թեթևացրել մեր ամենօրյա հոգսը», - պարզաբանում է Մասիս քաղաքի (Արարատի մարզ) փոքր մեկ սենյականոց բնակարանում ամուսնու և 18-ամյա դստեր հետ ապրող տնային տնտեսուհի Սառա Բադալյանը:

1995 թ.-ից ի վեր Հայաստանը մի շարք կառուցվածքային բարեփոխումներ է իրականացրել էներգետիկայի ոլորտում, որոնց թվում վերականգնել է գազամատակարարումն ու վերջին տարիներին 100,000-ից ավելի նոր գազի սպառողների միացրել: Թեև քաղաքային ջեռուցման ռազմավարության հաշվարկներով գազով ջեռուցումն ամենաէժան լուծումն է, աղքատ տնային տնտեսությունների շրջանում դրա հասանելիությունը ցածր է:

Ըստ ծրագրի առաջադրանքի թիմի ղեկավար Անի Բալաբանյանի՝ «Անվտանգ, մատչելի գազով աշխատող ջեռուցման համակարգերի անցնելու հարցում այս ընտանիքներին օգնելու համար Հայաստանի կառավարությունը դիմել է ԱՕՀԳ-ին 3,1 միլիոն ԱՄՆ դոլար աջակցություն ստանալու խնդրանքով, որը լրացվել է Համաշխարհային

բանկի «Քաղաքային ջեռուցում» ծրագրի բաղադրիչներից մեկի՝ 3 միլիոն ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ: Չնայած գազի գների վերջին աճին, մինչ ծրագրի ավարտը քաղաքային աղքատ տնտեսությունների մի զգալի մասն ապահովված կլինի անվտանգ և մատչելի գազամատակարարմամբ:





Retraining physicians to emphasize family medicine is a fundamental part of the Armenian Government's strategy to improve healthcare, and the World Bank is supporting this effort through the [Health System Modernization Project](#).

To qualify as family doctors, physicians at outpatient units are trained at the National Institute of Health and State Medical University for one year. This training is mandatory under the directive of the Ministry of Health, and receives support from the World Bank.

In addition to training doctors and nurses, the project is modernizing healthcare and expanding the population's access to good primary healthcare. And it is building or modernizing dozens of outpatient clinics around the country, and providing them with modern medical equipment. Tairov district, home to almost 3,000 people, has a new clinic built under the program. It is attracting five times more patients than when it was housed in the old building. "We used to work in very bad physical conditions," says Dr. Karine Hakobyan. "The building was in a horrible state: there were two rooms, no flooring, we were at risk of breaking our legs when we walked; the ceiling leaked. We would examine children, pregnant women, ill and healthy people - all in the same room."

Now the clinic has a waiting room and separate exam rooms. It also has an otoscope and an electrocardiogram, and the clinic's nurses can perform simple blood tests on the spot. In Armenia, 800,000 patients have been treated in 145 improved outpatient clinics. However, 70 outpatient units around the country still need to be moved to new buildings.

As part of the second phase of the health reform, several specialized medical institutions in Armenia were merged. The government decided to optimize services by merging hospitals and polyclinics. As a result, there are 40% fewer empty hospital beds, and over 70,000 square meters less unused hospital and polyclinic space.

Հայաստանի առողջապահության արդիականացումը

Փետրվարի 14, 2011

Ընտանեկան բժշկության շեշտադրման համար համար բժիշկներ վերապատրաստելն առողջապահության բարելավման ՀՀ կառավարության ռազմավարության հիմնական մասն է, և «Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի» միջոցով Համաշխարհային բանկն օժանդակում է այս ջանքին:

Ընտանեկան բժշկի որակավորումը ստանալու համար ամբուլատորիաների բժիշկները մեկ տարի վերապատրաստվում են Առողջապահության ազգային ինստիտուտում և պետական բժշկական համալսարանում: Վերապատրաստումը պարտադիր է ըստ առողջապահության նախարարության հրահանգի և ստանում է Համաշխարհային բանկի աջակցությունը:

Բացի բժիշկների և բուժքույրերի վերապատրաստումից, առողջապահության արդիականացման ծրագրով բնակչության համար ընդլայնվում է առողջության առաջնային պահպանման օղակի մատչելիությունը: Դրա միջոցով երկրում կառուցվում կամ արդիականացվում են և արդի բժշկական սարքավորումներով են մատակարարվում տասնյակ ամբուլատոր կլինիկաներ:

Թաիրով ավանում, որը շուրջ 3000 բնակիչ ունի, ծրագրի շրջանակում նոր կլինիկա է կառուցվել: Հիվանդների թիվը հին շենքում գտնվելու ժամանակվա համեմատ հնգապատկվել է: «Առաջ շատ վատ շենքային պայմաններում էինք աշխատում», - ասում է բժիշկ Կարինե Հակոբյանը: «Շենքը սարսափելի վիճակում էր: Երկու սենյակ ուներ, հատակին ծածկ չկար, քայլելիս ոտքներս կոտրելու վտանգին էինք ենթարկվում, առաստաղից կաթում էր: Երեխաներին, հղիներին, հիվանդ և առողջ մարդկանց՝ բոլորին նույն սենյակում էինք զննում»:

Այժմ կլինիկան ունի սպասասրահ և զննության առանձին սենյակներ: Այն ունի նաև օտոսկոպ և էլեկտրոկարդիոգրամ, և կլինիկայի բուժքույրերը կարող են տեղում արյան պարզ անալիզ կատարել: Հայաստանում 800,000 հիվանդ բուժում է ստացել 145 բարեկարգված ամբուլատոր կլինիկայում: Սակայն երկրում գտնվող շուրջ 70 ամբու-

լատորիաներ դեռևս անհրաժեշտ է նոր շենք տեղափոխել:

Առողջապահության բարեփոխումների երկրորդ փուլի շրջանակում Հայաստանի մի քանի մասնագիտացված բուժհաստատություններ միավորվեցին: Կառավարության որոշմամբ ծառայություններն օպտիմալացվեցին՝ միավորելով հիվանդանոցները և պոլիկլինիկաները: Արդյունքում 40 տոկոսով նվազեց դատարկ հիվանդանոցային մահճակալների թիվը և 70,000 քառակուսի մետրով հիվանդանոցների և պոլիկլինիկաների չօգտագործված տարածքները:



25-ամյա համագործակցություն
Համաշխարհային բանկ - Հայաստանի Հանրապետություն

Energy Reforms in Armenia: On the Way to Energy Security

July 19, 2011

Entrepreneurs like Marcos Gharibyan are fueling the growth in renewable energy in Armenia by investing in small hydro-power plants. Gharibyan took a risk and got a loan to invest in two small hydro power stations. After he built the station, Gharibyan took another leap of faith and built

a 10-kilometer-long high voltage power line to connect his stations so they can feed into the national power grid and he can recoup some of his investment. Built on a stream of the Azat River, the stations operate for only 4 months a year. However, regulations and incentives help to insure a profit.

The market for small hydropower stations is well developed in Armenia and the government has created incentives for investment. Energy law mandates that the power distribution grid buy electricity generated by small hydro power stations for 15 years after they become operational. The Public Services Regulatory Commission has established feed-in tariffs for the electricity they produce.

The World Bank provided a \$5-million-dollar credit to ensure investments in the sector. Co-financer, the European Bank for Reconstruction and Development, invested \$7 million dollars; the Cascade Universal Credit Organization invested \$3 million dollars. Many commercial banks are now providing loans for the construction of small hydropower stations. Thus, a favorable legal framework is coupled with the opportunity to get financing. Ninety-four small hydropower stations are operational in Armenia, providing about 3 percent of Armenia's domestic demand for electricity. Of those, 27 were built under the World Bank's [Renewable Energy Project](#). Despite remarkable achievements, Armenia's energy sector faces new challenges. A main electricity generator- the Metzamor nuclear power plant - is set to close, as are several thermal power stations. Depending on demand, Armenia will need an additional 850 to 1350 megawatts of electricity generation capacity.

Its state-owned high-voltage transmission network desperately needs investments, which are being supported by the World Bank through a transmission line rehabilitation project.



Էներգետիկայի բարեփոխումները Հայաստանում. դեպի Էներգետիկ անվտանգություն

Հուլիսի 19, 2011

Մարկոս Ղարիբյանի սման ձեռներեցները Հայաստանում զարկ են տալիս վերականգնվող էներգետիկայի աճին՝ ներդրումներ կատարելով փոքր ՀԷԿ-երում: Ղարիբյանը ռիսկի դիմեց և վարկ վերցրեց 2 փոքր ՀԷԿ-ում ներդրում կատարելու համար: Կայանը կառուցելուց հետո Ղարիբյանը հավատով լցված հերթական քայլն արեց և 10 կմ երկարությամբ բարձրավոլտ էլեկտրալար կառուցեց իր կայանները միացնելու համար, որպեսզի դրանք սնուցեին ազգային էլեկտրա-ցանցը և ինքն էլ կարողանար հետ ստանալ իր ներդրման որոշ մասը: Ազատ գետի վտակի վրա կառուցված կայանները տարեկան միայն 4 ամիս են աշխատում, սակայն կարգերն ու խթաններն օգնում են շահույթ ապահովել:

Հայաստանի փոքր ՀԷԿ-երի շուկան լավ զարգացած է, կառավարությունը ներդրումների համար խթաններ է ստեղծել: Էներգետիկայի օրենքով սահմանվում է էլեկտրաբաշխիչ ցանցի կողմից փոքր ՀԷԿ-երի շահագործումից հետո 15 տարի նրանց արտադրած էլեկտրաէներգիան գնելու պահանջ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը դրանց արտադրած էլեկտրաէներգիայի համար սահմանել է խթանող սակագներ:

Համաշխարհային բանկը 5 միլիոն դոլար վարկ է տրամադրել ոլորտում ներդրումներ ապահովելու համար: Համաֆինանսավորողը՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, ներդրեց 7 միլիոն դոլար, «Կասկադ ունիվերսալ» վարկային կազմակերպությունը ներդրեց 3 միլիոն դոլար: Շատ առևտրային բանկեր այժմ տրամադրում են փոքր ՀԷԿ-երի կառուցման վարկեր: Ուստի բարենպաստ օրենսդրական դաշտը զուգորդվում է ֆինանսավորում ստանալու հնարավորությամբ:

Հայաստանում գործում է 94 փոքր ՀԷԿ՝ ապահովելով Հայաստանի էլեկտրաէներգիայի ներքին պահանջարկի շուրջ 3 տոկոսը: Դրանցից 27-ը կառուցվել է Համաշխարհային բանկի «**Վերականգնվող էներգետիկայի**» ծրագրի շրջանակում:

Չնայած ուշագրավ ձեռքբերումներին՝ Հայաստանի Էներգետիկ ոլորտի առջև նոր մարտահրավերներ են ծառացել: Հիմնական էլեկտրաէներգիա արտադրողը՝ Մեծամորի ատոմակայանը, ինչպես նաև որոշ ջերմային էլեկտրակայաններ նախատեսվում է փակել: Պահանջարկով պայմանավորված՝ Հայաստանին անհրաժեշտ կլինեն լրացուցիչ 850-1350 մեգավատ էլեկտրաէներգիա արտադրելու հզորություններ: Պետական բարձրավոլտ հաղորդման ցանցն ունի ներդրումների խիստ կարիքներ, որոնց էլ Համաշխարհային բանկն աջակցում է հաղորդման գծերի հիմնանորոգման ծրագրի միջոցով:



Tatev's New Road Leads to Economic Revival

January 30, 2012



The road to Tatev monastery winds through a spectacular gorge with rocky slopes and lush forests. It once connected several villages, but became so dilapidated that it was known not as the most beautiful pass in Armenia, but as the most dangerous one. Today, the road is rebuilt, and high hopes are pinned on the revival it could bring.

“For over thirty years this road was in a desperate shape, some sections were simply impassable,” says Smbat Yeremayn, Shinuayr, village elder. “Now we are proud of the road we have, it’s like elsewhere in the civilized world.”

Tatev, a 9th century monastery, is an architectural masterpiece, a landmark, and a tourist attraction. The new road is luring tourists from Armenia and beyond once again, and starting to benefit these isolated communities.

One of the main goals of the Tatev Revival Project, which upgraded the road and other infrastructure here, was to connect the area’s heritage with today’s development. It brought together private and public partners, including international ones, around a common endeavor.

As a result, the Wings of Tatev, the longest aerial tramway in the world, spanning the Vorotan River Gorge, was built and is already a major attraction for tourists. The government, with World Bank support, rebuilt a 24,6 km section of the road that runs underneath the tram.

Տաթևի Նոր ճանապարհը տանում է տնտեսական վերածննդի

Հունվարի 30, 2012

Տաթևի վանք տանող ճանապարհն անցնում է դիտարժան կիրճի ժայռոտ լանջերով և փարթամ անտառների միջով: Մի ժամանակ այն մի քանի գյուղ էր միացնում, սակայն այն աստիճան էր խարխվել, որ հայտնի էր ոչ թե որպես Հայաստանի ամենագեղեցիկ, այլ ամենավտանգավոր լեռնանցք: Այսօր ճանապարհը վերակառուցված է, և մեծ հույսեր են կապվում այն վերածննդի հետ, որ այն կարող է բերել:

«Ավելի քան երեսուն տարի այս ճանապարհն անհուսալի վիճակում էր, որոշ հատվածներ պարզապես անանցանելի էին», -ասում է Շինուհայր գյուղի տարեց Սմբատ Երեմյանը: «Այժմ մենք հպարտ ենք մեր ունեցած ճանապարհով, այն այնպիսին է, ինչպես քաղաքակիրթ աշխարհի այլ վայրերում»:

Տաթևն 9-րդ դարի վանական համալիր է, ճարտարապետական գլուխգործոց, գեղատեսիլ, զբոսաշրջիկներին գրավող տեսարժան վայր: Նոր ճանապարհը Հայաստանից և այլ երկրներից զբոսաշրջիկներին ևս մեկ անգամ հրապուրում է և դրանից սկսում են շահել նշված մեկուսացած համայնքները: «Տաթևի վերածնունդ» ծրագրի հիմնական նպատակներից մեկը, որով արդիականացվեց ճանապարհն ու տեղի այլ ենթակառուցվածքները, տարածքի ժառանգությունն այսօրվա զարգացման հետ կապելն էր: Այս ընդհանուր ջանքի շուրջ միավորվեցին մասնավոր և պետական գործընկերները, այդ թվում՝ միջազգային: Արդյունքում կառուցվեց աշխարհի ամենաերկար ճոպանուղին՝ «Տաթևի թևերը», որը տարածվում է Որոտան գետի կիրճով և զբոսաշրջիկների համար հիմնական տեսարժան վայրերից է: Կառավարությունը Համաշխարհային բանկի աջակցությամբ վերակառուցեց ճոպանուղու ներքևով անցնող ճանապարհի 24,6 կմ հատվածը:



Helping Protect the Poor and Socially Vulnerable

October 25, 2012

In 2009, Armenia fell into what was to be known as the nation's worst recession since early 1990s. The economy declined by 14%, and poverty rose from 28% to 36%, affecting one in every three citizens of the country. The government had to take measures to withstand the socio-economic consequences of the crisis that had revealed the vulnerabilities of the country's economy and reversed some of the hard-earned achievements.

With support from the World Bank financed **Development Policy Operation (DPO)**, the Government of Armenia pulled together a

program that would mitigate the impact of the crisis on the poor on the one hand, and foster competitiveness and economic growth on the other hand.

The Family Benefit Program (FBP) has been revised by the social security services, which tried to identify new families in need of support, while removing ineligible ones from the system. As a result, targeting of poor households increased from 67% in 2008 to 76% in 2010.

The number of FBP recipients has grown by 250 in just one year in the Arabkir District Branch of Social Services. Adrineh Nikoyan, Head of Branch says: "We identified new families facing urgent problems affecting their livelihood - families that are in dire conditions."

Improving and streamlining the information systems at the social services agencies is another achievement the Government can pride itself with. In the past, people who needed state support often had to pay multiple visits and take numerous documents to the social service agencies and wait for a long time to have information checked about them. Now checking information is a matter of seconds.

Armenia has recently addressed another problem in the social sector: financing of pre-school education was introduced under the DPO to prepare 4 to 5 year-old children for school during one year. There was no pre-school education especially in many rural communities. Children under the age of 6 used to enter elementary school without any preparation.

The village of Marmashen in the north of Armenia was one of those communities. The kindergarten building had been destroyed by the 1988 earthquake. With financial support, a pre-school class was opened in Marmashen. Now 28 children attend the preschool from 9 am to 3 pm. "My kid goes there for two years now. It is very productive. We get to have free time around the house, and the kid comes home with homework done," says Armineh Baghdasaryan, resident of Marmashen.



Աջակցելով աղքատների և սոցիալապես անապահովների պաշտպանությանը

Յուլի 25, 2012

2009 թ.-ին Հայաստանը հայտնվեց 1990-ականների սկզբից ի վեր պետության ամենավատ տնտեսական անկման մեջ: Տնտեսության անկումը կազմեց 14 տոկոս, իսկ աղքատության աճը 28-ից հասավ 36 տոկոսի՝ բացասաբար անդրադառնալով երկրի յուրաքանչյուր երեք քաղաքացուց մեկի վրա: Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող **«2արգացման քաղաքականության գործառնություն»** (2ԶԳ) աջակցությամբ Հայաստանի կառավարությունը կազմեց ծրագիր, որը մի կողմից մեղմելու էր աղքատների վրա ճգնաժամի ազդեցությունը, մյուս կողմից խթանելու մրցունակությունն ու տնտեսական աճը:

Ընտանեկան նպաստների ծրագիրը (ԸՆԾ) փոփոխվեց սոցիալական ապահովության ծառայություններով, որոնցով փորձ արվեց բացահայտել աջակցության կարիք ունեցող նոր ընտանիքների՝ համակարգից հանելով դրանից օգտվելու իրավունք չունեցող ընտանիքներին: Արդյունքն աղքատ տնային տնտեսությունների հասցեականության ցուցանիշի աճն էր, որը 2008 թ.-ի 67 տոկոսի դիմաց 2010 թ.-ին կազմեց 76 տոկոս:

Արաբկիր համայնքի սոցիալական ծառայությունների մասնաճյուղում միայն մեկ տարվա ընթացքում ԸՆԾ ստացողների թիվն աճել է 250-ով: «Մենք բացահայտել ենք իրենց ապրուստի միջոցների վրա ազդող հրատապ խնդիրներ ունեցող նոր ընտանիքներ, որոնք ծայրահեղ ծանր պայմաններում են», - ասում է Արաբկիր համայնքի մասնաճյուղի ղեկավար Ադրինե Նիկոյանը:

Սոցիալական ծառայությունների մարմիններում տեղեկատվական համակարգերի բարելավումն ու պարզեցումը մյուս նվաճումն է, որով կառավարությունը կարող է հպարտանալ: Անցյալում պետական աջակցության կարիք ունեցող մարդիկ ստիպված էին բազմիցս այցելել և բազմաթիվ փաստաթղթեր ներկայացնել սոցիալական ծառայության մարմիններին և երկար սպասել իրենց մասին տեղեկությունների ստուգմանը: Այժմ տեղեկությունների ստուգումը մի

քանի վայրկյանի հարց է: Հայաստանը վերջերս սոցիալական ոլորտում լուծել է նաև մեկ այլ խնդիր: 2ԶԳ-ի շրջանակում նախատեսվել է նախադպրոցական կրթության ֆինանսավորում մեկ տարվա ընթացքում 4-5 տարեկան երեխաներին դպրոցի համար նախապատրաստելու նպատակով: Նախադպրոցական կրթությունը բացայակայում էր գյուղական համայնքներում: Հայաստանի հյուսիսում գտնվող Մարմաշեն գյուղը նման համայնքներից մեկն էր: Մանկապարտեզի շենքը 1988 թ.-ի երկրաշարժից ավերվել էր: Ֆինանսական աջակցությամբ Մարմաշենում բացվեց նախադպրոցական դասարան: Այժմ 28 երեխա ժամը 9-ից 15-ը հաճախում է նախակրթարան:



25-ամյա համագործակցություն
Համաշխարհային բանկ - Հայաստանի Հանրապետություն



Printing has a long tradition in Yerevan, one the Samark Company has been proud to keep alive, printing books, newspapers and magazines with 40 employees. But maintaining an edge in a competitive market is tough, and Samark needed to find another market niche.

So Samark took the plunge and borrowed US\$92,000 in the midst of a global financial crisis to buy equipment to print cardboard boxes and containers.

Small and medium enterprises (SMEs) like Samark are key producers, employers and taxpayers in Armenia's economy. They do business where big businesses often can't or won't. SMEs provide 43% of the country's gross domestic product 42% of jobs, and 60% of social payments to the state budget. Their sustainability is critical for the health of Armenia's economy.

But the economic downturn exposed these businesses' financial vulnerabilities. To help close the financing gap and keep businesses afloat and able to expand, the Armenian government launched the [Access to Finance for Small and Medium Enterprises](#) project in 2009 with US\$50 million in World Bank support.

Under the project, loans ranged from short to long term, and from US\$2,500 to 300,000. From 2009 to 2012, more than 7,500 SMEs took out credit lines from 15 commercial banks and credit organizations. Loans allowed companies like Samark to survive.

Առողջ բիզնես առողջ տնտեսության համար

Հունիսի 3, 2013

Տպագրությունը երևանում երկարամյա ավանդույթ ունի, որը «Սամարկ» ընկերությունը հպարտությամբ պահպանում է՝ 40 աշխատակ-ցով տպագրելով գրքեր, թերթեր և ամսագրեր: Սակայն մրցակցային շուկայում առավելության պահպանումը դժվար է, և «Սամարկին» անհրաժեշտ էր շուկայում մեկ այլ նիշա գտնել: Ուստի, «Սամարկը» վճռական քայլ արեց և 92,000 ԱՄՆ դոլարի փոխառություն վերցրեց սովորաթղթե տուփերի և տարաների վրա տպագրելու սարքավորումներ ձեռքբերելու համար:

«Սամարկի» նման փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ) Հայաստանի տնտեսության հիմնական արտադրողները, գործատուները և հարկ վճարողներն են: Նրանք գործարարությամբ են զբաղվում այն ոլորտներում, որտեղ խոշոր ձեռնարկատերերը չեն կարողանում կամ չեն զբաղվում: ՓՄՁ-ներն ապահովում են երկրի համախառն ներքին արդյունքի 43 տոկոսը, աշխատատեղերի 42 տոկոսը և պետական բյուջեին ուղղվող սոցիալական վճարների 60 տոկոսը: Դրանց կայունությունն էական նշանակություն ունի Հայաստանի տնտեսության առողջության համար:

Սակայն տնտեսության անկումն ի ցույց դրեց բիզնեսների ֆինանսական խոցելիությունը: Ֆինանսավորման ճեղքը փակելու և գործն ընթացքի մեջ պահելու և ընդլայնելու հնարավորություն տալու համար Հայաստանի կառավարությունը 2009 թ.-ին մեկնարկեց **«Փոքր և միջին ձեռնարկությունների համար ֆինանսական միջոցների հասանելիություն»** ծրագիրը Համաշխարհային բանկից 50 միլիոն ԱՄՆ դոլար օժանդակությամբ:

Ծրագրի շրջանակում առկա էին կարճից երկարաժամկետ վարկեր, որոնք կազմում էին 2,500-ից 300,000 ԱՄՆ դոլար: 2009-2012 թթ.-ին ավելի քան 7,500 ՓՄՁ-ներ 15 առևտրային բանկերից և վարկային կազմակերպություններից վարկային գծեր ստացան:

Վարկերը «Սամարկի» նման ընկերություններին տվեցին գոյատևման հնարավորություն:





Her library in the Armenian village of Tandzatap may be small, but veteran school teacher, Angela Grigoryan, says it is a big part of her life. So, when the community center which houses the library began to decay a few years back, Grigoryan and other concerned villagers decided to renew it with the help of a social investment fund.

“The building had problems and water was leaking into it and destroying the books, but through renovations we saved the library,” said Grigoryan. Now, Tandzatap residents not only have a renovated library, but a new reception hall, meeting room, game room, and medical clinic as well. They paid ten percent of final building costs, and have been put in charge of maintaining the community center ever since.

The renovated community center in Tandzatap is one of the 272 infrastructure projects financed through Armenia’s **Social Investment Fund**.

The World Bank-supported fund allows communities around the country to decide what they need most, and covers 90 percent of total renovation and building costs.

In the township of Sisian, residents opted with Fund money to renew their decaying cultural center. Sisian resident and mother of four, Margarit Grigoryan, said she and other community members now feel it’s their duty to maintain the newly renovated cultural center which they helped pay for, and where some of them, like her, are now even gainfully employed.

“I started helping out here the moment renovations began, and I kept coming to help afterwards, and then I was hired as a full time employee,” Grigoryan said.

Other projects implemented through the social fund have involved the renovation or total rebuilding of kindergartens, schools, musical colleges, water and irrigation systems, as well as roads.

Համայնքները վերականգնում են կենսական կառույցները

Նոյեմբերի 7, 2013

Հայկական Տանձատափ գյուղում գտնվող իր գրադարանը միգուցե փոքր է, բայց վաստակավոր ուսուցչուհի Անժելա Գրիգորյանն ասում է, որ այն իր կյանքի մեծ մասն է:

Ուստի, երբ համայնքային կենտրոնը, որտեղ տեղակայված է գրադարանը, մի քանի տարի առաջ սկսեց քայքայվել, Գրիգորյանն ու մտահոգված մյուս գյուղացիները որոշեցին այն նորացնել սոցիալական ներդրումների հիմնադրամի օգնությամբ:

«Շենքը խնդիրներ ուներ և ջրի արտահոսք կար, որը ոչնչացնում էր գրքերը, սակայն վերանորոգմամբ մենք գրադարանը փրկեցինք», - ասում է Գրիգորյանը:

Այժմ Տանձատափի բնակիչներն ունեն ոչ միայն վերանորոգված գրադարան, այլև նոր ընդունելությունների սրահ, նիստերի սենյակ, խաղասրահ, ինչպես նաև բուժկլինիկա: Նրանք վճարել են շինարարության վերջնական ծախսերի 10 տոկոսը և դրանից հետո նրանց վրա է դրվել համայնքային կենտրոնի պահպանման պատասխանատվությունը:

Տանձատափի վերանորոգված համայնքային կենտրոնը 272 ծրագրերից մեկն է, որը ֆինանսավորվել է **Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի** երրորդ ծրագրի միջոցով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ գործող հիմնադրամը երկրի համայնքներին հնարավորություն է տալիս որոշելու, թե ինչն է իրենց առավել անհրաժեշտ և հոգում է ընդհանուր վերանորոգման և շինարարական ծախսերի 90 տոկոսը:

Սիսիան քաղաքում բնակիչները հիմնադրամի միջոցներով ընտրեցին իրենց քայքայվող մշակութային կենտրոնի վերանորոգումը: Սիսիանի բնակչուհի և 4 երեխայի մայր Մարգարիտ Գրիգորյանի խոսքով, նա և համայնքի մյուս անդամներն այժմ իրենց պարտականությունն են համարում նոր վերանորոգված մշակութային կենտրոնի պահպանումը, որի դիմաց իրենց օգնել են վճարել և որտեղ հիմա ոմանք, իր պես, շահավետորեն աշխատում են:

«Սկսեցի օգնել այստեղ այն պահից, երբ վերանորոգումն սկսվեց, ապա որպես լրիվ դրույքով աշխատող ներգրավվեցի», - ասում է Գրիգորյանը:

Սոցիալական հիմնադրամի միջոցով իրականացվող մյուս ծրագրերն ընդգրկել են մանկապարտեզների, դպրոցների, երաժշտական դպրոցների, ջրի և ոռոգման համակարգերի, ինչպես նաև ճանապարհների վերանորոգումը կամ ամբողջական վերակառուցումը:





4 and 5-year-olds in the Armenian region of Vayots Dzor are finally learning the simple but imperative skills, that will make them better students in their studies ahead.

Their classroom, educational tools and specially-trained teacher are part of an early education development project in Armenia, where preschools and kindergartens had greatly deteriorated - or closed altogether - after the fall of the Soviet Union in the early 1990's.

The government - run project supported by the World Bank in collaboration with UNICEF has so far created 275 new early education facilities across Armenia, mostly in the country's rural regions where the need is greatest. In addition, the project has provided nearly 600 educators with training in updated early education techniques.

"All the staff has higher education, but the training taught us to be more innovative and use new materials, and it helped us approach each child individually," said Marine Grigoryan, a Kindergarten Principal, in the village of Zangakatur in Ararat region. New early education centers have also been created through the project in already existing schools.

Parent, Armenuhi Nazaryan, says the newly added kindergarten to her village's school in Vayots Dzor will be good for her 4-year-old son, as soon as he gets used to it.

"It is hard for him at first, but he is adapting little by little," she said.

Վաղ կրթությունը պայծառ ապագա է երաշխավորում

Նոյեմբերի 7, 2013

Հայաստանի Վայոց Ձորի մարզի 4 և 5 տարեկանները վերջապես սովորում են պարզ, բայց կարևորագույն հմտություններ, ինչը նրանց առաջիկա ուսման ընթացքում ավելի լավ աշակերտ կդարձնի:

Նրանց դասասնյակը, ուսուցողական պարագաները և հատուկ վերապատրաստում անցած ուսուցիչը վաղ կրթության զարգացման ծրագրի մաս են կազմում Հայաստանում, որտեղ նախադրարոցական հաստատությունները և մանկապարտեզներն զգալիորեն վատթարացել կամ առհասարակ փակվել էին 1990-ականների սկզբին՝ Խորհրդային միության փլուզումից հետո:

Կառավարության կողմից Համաշխարհային բանկի աջակցությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ իրականացվող ծրագրի միջոցով մինչ այժմ 275 վաղ կրթական հաստատություններ են ստեղծել, հիմնականում Հայաստանի տարբեր գյուղական շրջաններում, որտեղ կարիքն ամենամեծն էր: Բացի այդ, ծրագրով շուրջ 600 դաստիարակներ են վերապատրաստվել վաղ կրթության արդիականացված մեթոդների ուղղությամբ:

«Ողջ անձնակազմը բարձրագույն կրթություն ունի, սակայն վերապատրաստումը մեզ սովորեցրեց լինել ավելի՛ նորարար և օգտագործել նոր նյութեր, ինչն օգնեց յուրաքանչյուր երեխային անհատական մոտեցում ցուցաբերելու հարցում», - ասաց Արարատի մարզի Չանգակատուն գյուղի մանկապարտեզի տնօրեն Մարինե Գրիգորյանը:

Ծրագրի միջոցով ստեղծվել են նաև նոր կրթական կենտրոններ արդեն իսկ գոյություն ունեցող դպրոցներում:

Ծնող Արմենուհի Նազարյանն ասում է, որ Վայոց Ձորում իրենց գյուղի դպրոցին ավելացված մանկապարտեզը լավ կլինի իր չորս տարեկան որդու համար, երբ նա սովորի դրան:

«Սկզբում նրա համար դժվար էր, սակայն կամաց-կամաց հարմարվում է», - ասաց նա:



Risk to Try, Dare to Triumph – Animating Armenia's Economy with Innovation and Competitiveness

December 16, 2014

Tamar Kaghzvandyan was captivated by images of “Alice in Wonderland” as a youngster and developed a passion for animated cartoons. Today, this 20-year-old, jean-clad, curly brunette Art Academy student has found an outlet for her bustling creativity at the Multimedia Lab housed in the Gyumri Technology Center in northwestern Armenia.

The Multimedia Lab's learning modules have helped Tamar and dozens of others to learn the basics of animation, and within a year many have become full members.

Armine Mikhaelyan was an unemployed teacher raising two children when she first joined the Lab, but is now working steadily. “I learned about this opportunity through my sister, who had benefitted from the courses provided here,” says Armine.

Tamar and Armine are just two of many people whose lives have taken a positive trajectory following the opening of the Gyumri Technology Center, which was established through the **E-Society, Innovation and Competitiveness Project**, a collaboration between Armenia and the World Bank.

Information and communication technologies play an essential role in helping the local economy to grow more businesses and people to find jobs. During the last decade alone, the number of companies in Armenia's information technology (IT) sector has grown more than 400 times, reaching a total output of around US\$ 300 million in 2013.

With such a large growth in the IT market, the World Bank and the Government of Armenia have committed to facilitating a more competitive and innovative environment for firms so that technology clusters will also develop outside the capital city of Yerevan.

The Gyumri Technology Center – or “Technopark” as the locals call it – supports the marketability of new and innovative ideas by incubating teams and startups, and taps into early state venture capital to generate new business ideas into viable enterprises.

On the same premises as the Technology Center, the Gyumri Information Technologies Center is an educational foundation which offers a two-year program that includes Web Technologies, Mobile Technologies and Hardware Design, as well as Architecture.



Ռիսկի դիմել՝ փորձելու, համարձակվել՝ հաղթելու համար Տնտեսության աշխուժացումը նորամուծությամբ և մրցունակությամբ

Դեկտեմբերի 16, 2014

Թամար Կաղզվանոյանին պատանեկության տարիքում գերել էին «Ալիսան հրաշքների աշխարհում» մուլտֆիլմի պատկերները և նա տարվել էր անիմացիոն մուլտֆիլմերով: Այսօր այս 20-ամյա ջինս կրող գանգուր թխահերը՝ գեղարվեստի ակադեմիայի ուսանողը, Հայաստանի հյուսիս-արևմուտքում՝ Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում տեղակայված մուլտիմեդիա լաբորատորիայում, իր գործունյա ստեղծարարության կետն է հիմնել:

Մուլտիմեդիա լաբորատորիայի ուսումնառության մոդուլները Թամարին և տասնյակ ուրիշներին օգնել են ուսանել անիմացիայի հիմունքները և մեկ տարվա ընթացքում շատերն են դարձել լիիրավ անդամ: Արմինե Միքայելյանը երկու երեխա մեծացնող գործազուրկ ուսուցիչ էր, երբ անդամակցեց լաբորատորիային, սակայն այժմ կայուն աշխատանք ունի: «Այս հնարավորության մասին քրոջիցս իմացա, ով այստեղ մասնակցել էր դասավանդվող դասընթացներին», - ասում է Արմինեն:


Թամարն ու Արմինեն երկուսն են այն բազում մարդկանցից են, ով կյանքը դրական ընթացք է ստացել Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի բացումից հետո, որն ստեղծվել է Հայաստանի և Համաշխարհային բանկի համագործակցությամբ իրականացվող **«Էլեկտրոնային հասարակության, նորարարության և մրցունակության ծրագրի»** միջոցով:

Տեղեկատվական և համագործակցության տեխնոլոգիաները կարևոր դեր են կատարում տեղական տնտեսությանն աջակցելու հարցում՝ ավելի մեծ թվով բիզնեսների օգնելով: Միայն վերջին տասնամյակում Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում ընկերությունների թիվն աճել է ավելի քան 400 անգամ, որոնց ընդհանուր արտադրանքը 2013 թ.-ին հասել է շուրջ 300 միլիոն ԱՄՆ դոլարի: ՏՏ շուկայում նման մեծ աճի պայմաններում Համաշխարհային բանկը և ՀՀ կառավարությունը հանձն են առել ընկերությունների համար ավելի մրցունակ և նորարարական միջավայրի խթանումը, որպես-

զի տեխնոլոգիական կլաստերները զարգանան նաև մայրաքաղաք Երևանից դուրս:

Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը կամ Տեխնոպարկը, ինչպես որ տեղացիներն են այն անվանում, օժանդակում է նոր և նորարարական գաղափարների շուկայախանմանը թիմերի և սկսնակների ինկուբացիայի միջոցով և վաղ պետական վենչուրային կապիտալն օգտագործում է նոր բիզնես գաղափարները կենսունակ ձեռնարկություններ դարձնելու համար:

Նույն շենքում է գտնվում Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն կրթական հիմնադրամը, որն առաջարկում է վեբ և մոբայլ տեխնոլոգիաների և տեխնիկայի նախագծման, ինչպես նաև ճարտարապետության երկամյա ծրագիր:



25-ամյա համագործակցություն
Համաշխարհային բանկ - Հայաստանի Հանրապետություն



Gohar Avagyan, a 30-year veteran at the National Archives of Armenia, can hardly recall a time in her career when she and other employees did not have to check the condition of precious documents after a long, cold winter. Thankfully, that is now changing – for Gohar, her colleagues and the documents.

“This is the second consecutive winter that we are not fearful to witness faded illuminations on documents,” says Gohar, proudly showing the elaborately decorated and colorful bulla of the 18th century Catholics. “It was so freezing in the winter time that we barely managed to care for the staff, let alone the priceless documents we housed.”

Six years ago, many skeptics raised their eyebrows when a World Bank study estimated that potential energy efficiency investments in Armenia’s public facilities could bring about the highest returns with payback periods of only two to ten years. That skepticism was soon dispelled, however, when it became apparent that Armenia could save more than US\$ 360 million annually (equivalent to 4,3 percent of its 2009 GDP) through energy efficiency investments.

An innovative financing scheme – designed under an **Energy Efficiency Project** financed from by the Global Environment Facility– has created opportunities for public institutions to invest in energy efficiency retrofits and use the realized energy savings to repay the investment.

A new dynamic has also been created in the local market, now exposed to energy efficient renovation and construction technologies that are creating spillover effects for energy efficient private housing demand and a revision of building standards.

The Energy Efficiency Project financed a range of retrofits at the university, including replacement of doors and windows, replacement of the boiler and subsidiary equipment, and changing of the gas connection and water supply, sewage, and ventilation.

Չմտահոգվելով ձմռան մասին

Փետրվարի 26, 2015

Հայաստանի ազգային արխիվի 30 տարվա փորձառու աշխատակից Գոհար Ավագյանը չի հիշում իր աշխատած տարիների ընթացքում այնպիսի ժամանակ, երբ ինքը կամ մյուս աշխատակիցները երկարաշունչ, ցուրտ ձմռանից հետո ստիպված չլինեին ստուգել թանկարժեք փաստաթղթերի վիճակը: Բարեբախտաբար, այժմ սա փոխվում է Գոհարի, նրա գործընկերների և փաստաթղթերի համար:

«Սա երկրորդ հաջորդական ձմեռն է, երբ մենք չենք վախենում ակա-նատես դառնալ փաստաթղթերի նկարագրողումների խուճացմանը», - ասում է Գոհարը՝ հպարտորեն ցույց տալով 18-րդ դարի կաթողիկոսի մանրակրկիտ ձևավորված և գունավոր կնիքը: «Ձմեռն այնքան ցրտաշունչ էր, որ հազիվ կարողանում էինք հոգ տանել աշխատակիցների մասին»՝ չխոսելով անգամ մեզ մոտ պահվող ան-գին փաստաթղթերի մասին», - ասում է նա: Վեց տարի առաջ շատ թերահավատներ զարմանք արտահայտեցին, երբ Համաշխարհա-յին բանկի ուսումնասիրությամբ հաշվարկվեց, որ Հայաստանի հա-սարակական նշանակության օբյեկտներում Էներգախնայողության ուղղությամբ հնարավոր ներդրումները կարող են ամենաբարձր վե-րադարձն ապահովել հետգնման ընդամենը երկուսից տասը տարվա ընթացքում: Թերահավատությունը, սակայն շուտով փարատվեց, երբ ակնհայտ դարձավ, որ Հայաստանը կարող է տարեկան ինսայել ավե-լի քան 360 միլիոն ԱՄՆ դոլար, որը համաժեռ էր իր 2009 թ.-ի ՀՆԱ-ի 4,3 տոկոսին, Էներգախնայողության ուղղությամբ ներդրումների մի-ջոցով:

Ֆինանսավորման նորարարական սխեման, որը նախագծվել էր Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի կողմից ֆինանսավորվող **Էներ-գախնայողության ծրագրի** շրջանակում, պետական հաստատու-յունների համար ստեղծել է Էներգախնայողությանն ուղղված արդիա-կանացման ներդրումների և իրացված Էներգախնայողություններն օգտագործելու հարավորություններ:

Տեղական շուկայում նոր դինամիկա է ձևավորվել վերանորոգման

և շինարարական Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներգոր-ծությամբ, որոնք դրական փոխազդեցություններ են ունենում՝ տա-րածվելով Էներգաարդյունավետ մասնավոր բնակարանաշինության պահանջարկի և շինարարական չափանիշների վերանայման վրա: Էներգախնայողության ծրագրի միջոցով համալսարանում ֆինանսա-վորվել են մի շարք արդիականացման աշխատանքներ, փոխարինվել են դռներ և պատուհաններ, կաթսա և օժանդակ սարքավորումներ և գազի միացման և ջրամատակարարման, կոյուղու և օդափոխման փոփոխություն է կատարվել:



Water in Armenia - from Shortage to Abundance

July 1, 2015

Armenia's water sector was in a state of despair after the fall of the Soviet Union: the system suffered from increased demand, dilapidated infrastructure, water leakage, wastage, and costly service provision. Realizing that the main reason behind the poor water service was weak management of available resources, Armenia's Government decided to partner with the private sector to introduce significant reforms in the

sector. As a result, the sector today is well regulated with an established institutional framework, increased operating efficiency, improved service provision, and greater customer satisfaction.

With World Bank support from 2000 to the present, the Government established successful Public Private Partnerships (PPP) in the water sector. Such private sector participation was viewed by the Bank and Government as an agent of change. They brought about significant reforms to the services. Later, PPP schemes with the engagement of international private operators were successfully implemented in all water utilities in Armenia, yielding excellent results for the development of the water and wastewater sectors.

One of the starkest improvements is the increase in the supply of water to Yerevan residents for 23 hours on average, compared with only 4 hours before the engagement. Areas outside Yerevan now have 17 hours of water supply on a daily basis.

As energy costs were the biggest expense for the utility, operators sought measures to cut energy consumption. Gravity schemes were introduced to reduce pumping and modern energy efficient pumps were installed, ultimately cutting energy consumption by almost 50 percent. This effort reduced one of the biggest burdens on the water supply system and opened room for further improvements.

The fully automatic Dispatch Unit located outside the capital city now allows for monitoring and managing of the Integrated Water Resource Management system in terms of both quality and reallocation of supply, while addressing emergencies in a timely manner.

Successful PPP projects in the water sector present viable alternative solutions for governments interested in undertaking significant water reforms. Armenia has discovered that it is possible to carry out modernization programs and undertake considerable water sector reforms when partnering with private sector institutions.



Ջուրը Հայաստանում՝ սակավությունից առատության

Հուլիսի 1, 2015

Խորհրդային միության փլուզումից հետո Հայաստանի ջրային ոլորտն անհուսալի վիճակում էր: Համակարգը տուժում էր պահանջարկի ավելացման, խարխված ենթակառուցվածքի, ջրի արտահոսքի, վատնման և ծառայության մատուցման ծախսատարության հետևանքով: Գիտակցելով, որ ջրի վատ ծառայության հիմնական պատճառը մատչելի պաշարների վատ կառավարումն էր՝ Հայաստանի կառավարությունը որոշեց մասնավոր հատվածի հետ գործընկերությամբ ոլորտում նշանակալի բարեփոխումներ ներդնել: Համաշխարհային բանկի աջակցությամբ 2000 թ.-ից մինչ օրս կառավարությունը ջրային ոլորտում ստեղծել է հաջողված պետական-մասնավոր գործընկերություններ (ՊՄԳ): Մասնավոր հատվածի նման մասնակցությունը Համաշխարհային բանկի և կառավարության կողմից դիտվում էր որպես փոփոխության միջոց: Դրանցով նշանակալի բարեփոխումներ ներդրվեցին ծառայություններում: Ավելի ուշ ՊՄԳ սիսեմները, միջազգային մասնավոր օպերատորների ներգրավմամբ, հաջողությամբ իրականացվեցին Հայաստանի բոլոր ջրային ընկերություններում՝ տալով ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների զարգացման գերազանց արդյունքներ:

Բարելավման ամենացայտուն օրինակներից մեկը Երևանի բնակիչներին ջրամատակարարման տրամադրման տևողության ավելացումն էր, որը միջինը կազմում է 23 ժամ՝ մինչ ներգրավվածությունն առկա ընդամենը 4 ժամի համեմատ: Երևանից դուրս վայրերում այժմ օրական ջրամատակարարումը 17 ժամ է:

Քանի որ ընկերությունների էներգետիկ ծախսերն ամենամեծն են, օպերատորները փորձել են ձեռնարկել էներգիայի սպառումը կրճատելու միջոցներ: Ինքնահոս համակարգեր են ներդրվել պոմպային համակարգերը կրճատելու համար և էներգախնայող արդի պոմպեր են ներդրվել՝ ի վերջո էներգասպառումը կրճատելով գրեթե 50 տոկոսով: Մայրաքաղաքից դուրս գտնվող լիարժեք ավտոմատ դիսպետչերական միավորն այժմ տալիս է ջրային պաշարների ինտեգրված

կառավարման համակարգի մշտադիտարկման և կառավարման հնարավորություն ինչպես որակի, այնպես էլ մատակարարման վերաբառի ման առումով՝ ժամանակին արձագանքելով արտակարգ իրավիճակներին:



“We are the Co-operative!”

September 10, 2015

“We go to bed earlier than most people, and wake up earlier to watch the sunrise,” says Gevorg Galstyan. “The morning air is always cool and sweet to me, and I collect my thoughts for the entire day!”

Like most people in his village, Gevorg is a cattle farmer. As were his parents. The mountainous area around the village, where he and his young family live, is famous for its fantastic view and pastures. In the room Gevorg suggests to listen to his story, and address any questions I might have. I got it – timing is key to him. This is how we arrived at “Gevorg’s Monologue”.

The Co-op

We are pioneers. Our neighbors, who started a few months later, were asking about the first steps, as if we knew all about what a co-op was. Formally, the co-operative of the Pasture Users Association in Nerqin Tsaghkavan community got state registration in April 2011.

Due to poor farming practices, a large part of our pasture lands were turning into deserts, so we agreed that the project’s target was to restore soil health as a must. Well, I mean all the co-op members, agreed on the amounts per capita as a co-share of the co-operative, and identified the basic needs that the project team could help with, such as basic knowledge, advice, and the arithmetic of keeping the co-op alive!

The Outcomes

As of now, since the beginning of **Community Agricultural Resource Management and Competitiveness (CARMAC)** project we have achieved a 20% increase in cow milk yield, and a cattle weight gain of 60%. The fodder level for the confinement period has increased about 10%. Pasture fees have been introduced and last year they amounted to about 660,000 AMD. Thanks to the accumulation scheme, we purchased a caterpillar tractor for about 3,5 million AMD. These

statistics are fantastic - you can’t imagine the level of farming poverty before this project, I mean, not physical, but in terms of instruments.

The Change

Co-operatives are like families. Secure farming, I will call it this way. The co-op creates a “new type of rural economy” that could allow people to grow in their experience, socially and personally, as well as in responsibility, hope and co-operation. Another 2-3 years and these features will become more visible. I feel this change during each board meeting. 10 of us united and are already focused on the future. We are the Co-operative!



«Մենք ենք կոոպերատիվը»

Սեպտեմբերի 10, 2015

Գևորգը, իր գյուղի մարդկանց մեծամասնության նման, ֆերմեր է։ Նրա ծնողներն էլ էին ֆերմերներ։ Գյուղի շրջակա լեռնոտ տարածքը, որտեղ ապրում է ինքն ու իր երիտասարդ ընտանիքը, հայտնի է հիասքանչ տեսարանով և արոտներով։ Սենյակում Գևորգն առաջարկում է լսել իր պատմությունը և տալ ցանկացած հարց, որը կունենամ։ Հասկացա՞ ժամանակը նրա համար կարևոր է։ Ահա այսպես հասանք «Գևորգի մենախոսությանը»։

Կոոպերատիվը

Մենք առաջիններն ենք։ Մեր հարևանները, որոնք մի քանի ամիս անց սկսեցին, հարցնում էին առաջին քայլերի մասին, ասես թե մենք ամեն ինչ գիտեինք այն մասին, թե ինչ է կոոպերատիվը։ Պաշտոնապես Ներքին Շաղկապան համայնքի «Արոտագործողների միություն» կոոպերատիվը պետական գրանցում ստացավ 2011 թ.-ի ապրիլին։ Անասնապահական վատ գործելակերպերի հետևանքով մեր արոտավայրերի զգալի մասն անապատի է վերածվում, ուստի մենք պայմանավորվեցինք, որ ծրագրի՝ հողի առողջության վերականգնման թիրախը պարտադիր պայման է։ Այսպես, կոոպերատիվի բոլոր անդամները համաձայնության եկան մեկ շնչի հաշվով գումարների շուրջ՝ որպես կոոպերատիվի բաժնեմաս և բացահայտեցին հիմնական կարիքները, որոնց մասով ծրագրի թիմը կարող էր օգնել։

Արդյունքներ

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» շրջանակում մենք ապահովել ենք կովերի կաթնատվության աճ 20%-ով, իսկ կենդանիների քաշն ավելացել է 60%-ով։ Մսուրային շրջանում անասնակերի մակարդակն ավելացել է շուրջ 10%-ով։ Արոտների վճարներ են սահմանվել և անցյալ տարի կազմել են շուրջ 660,000 ՀՀ դրամ։ Կուտակման սխեմայի շնորհիվ գնել ենք թրթուռավոր տրակտոր՝ շուրջ 3,5 միլիոն ՀՀ դրամով։ Այս վիճակագրական տվյալներն արտառոտ են։ Չեք կարող պատկերացնել անասնապահության աղքատությունը մինչև այս ծրագիրը, ֆիզիկա-

կանն ի նկատի չունեմ, այլ գործիքների առումով։

Փոփոխությունը

Կոոպերատիվներն ընտանիքների նման են։ Ապահով անասնապահություն՝ ես այն այդպես կկոչեմ։ Կոոպերատիվն ստեղծում է «գյուղական նոր տեսակի տնտեսություն», որը մարդկանց տալիս է իրենց փորձը՝ հասարակական և անձնական, ինչպես նաև պատասխանատվությունը, հույսն ու համագործակցությունն ավելացնելու հնարավորություն։ Եվս 2-3 տարի և այս հատկություններն ավելի տեսանելի կդառնան։ Այս փոփոխությունն զգում եմ յուրաքանչյուր խորհրդի նիստի ժամանակ։ Մեզնից 10-ը միավորվել են և արդեն կենտրոնացել ապագայի վրա։ Մենք ենք կոոպերատիվը։



Life after Lethargy: Training and Support Give Hope to the Most Vulnerable

October 15, 2015

In the hustle and bustle of the crowded Disability Resource Center in Vanadzor nobody seemed to notice the strangers entering with their ledgers and cameras. A social worker at the Center later explained that they are getting ready for the celebration of the International Day of the Elderly.

On any given day, the Center provides free lunch and other services to about 170 people in the town. Many of these people are elderly, poor and with disabilities. More than half are unable to visit the Center themselves, so social workers deliver food to their homes on a daily basis, but they also receive other important care, such as health screenings and emotional support. Downtown in Vanadzor, a private college by the name of “Dpratur” provides lessons about the intricate art of pastry to a group of women with disabilities. Tatevik, one of the women attending the training, showed us photos of the

pastries the class had learned to cook together. She was so excited at the idea that she and her class-mates could now think of working from home and even starting a business together.

In a goldsmith's shop in town, Vahe Derdzian is training apprentices to mold and shape silver into delicate jewelry. Creating a filigree bracelet is an important objective for Babken, a trainee who is a wheel chair user, and who has set his eyes on becoming a goldsmith. The innovative [Japan Social Development Fund project](#), a first of its kind for the World Bank Armenia Office, has financed a local non-governmental structure in delivering community-based services and support for employment opportunities at a grass roots level. Over the past two years, 521 people have benefited directly from various vocational trainings, with 203 currently enrolled in colleges in Yerevan, Gyumri and Vanadzor.



Կյանքն անտարբերությունից հետո. ուսուցումն ու աջակցությունն ամենախոցելիներին հույս են տալիս

Հոկտեմբերի 15, 2015



Վանաձորի հաշմանդամների մարդաշատ ռեսուրս կենտրոնի աղմուկի և իրարանցման մեջ թվաց, որ որևէ մեկը չնկատեց տեսախցիկներով ներս մտնող անձանիներին: Ավելի ուշ կենտրոնի սոցիալական աշխատողը բացատրեց, որ պատրաստվում են տարեցների միջազգային օրվա տոնակատարությանը:

Ցանկացած օր կենտրոնը քաղաքում անվճար ճաշ և այլ ծառայություններ է մատուցում շուրջ 170 մարդու: Նրանցից շատերը տարեց են, աղքատ և հաշմանդամ: Կեսից ավելին ի վիճակի չէ ինքնուրույն կենտրոն այցելել, ուստի սոցիալական աշխատողներն ամեն օր նրանց տուն ուտելիք են տանում: Նրանք նաև կարևոր խնամք են ստանում, օրինակ՝ առողջության սքրինինգ և էմոցիոնալ աջակցություն: Վանաձորի կենտրոնում «Դպրատուն» անվամբ մասնավոր քոլեջում հաշմանդամ կանանց ներկայացվում են հրուշակագործության բարդ արվեստի դասեր: Տաթևիկը՝ ուսուցմանը մասնակցող կանանցից մեկը, մեզ ցույց տվեց խմորեղենների նկարները, որոնք կուրսով սովորել են միասին պատրաստել: Նա շատ հուզված էր այն

մտքից, որ ինքն ու իր համակուրսեցիները կարող են այժմ մտածել տանից աշխատելու կամ անգամ համատեղ գործ սկսելու մասին:

Քաղաքի ոսկերչական խանութում Վահե Դերձյանն աշակերտներին սովորեցնում է արծաթ ձուլել և ստանալ նուրբ զարդեր: Բաբկենը, որն օգտվում է անվասայլակից, ցանցաձև հյուսված ապարանջան ստեղծելը կարևոր նպատակ է համարում: Նա որոշել է ոսկերիչ դառնալ:

Ճապոնիայի սոցիալական զարգացման հիմնադրամի ծրագիրը, որը Համաշխարհային բանկի Երևանի գրասենյակի համար իր տեսակով առաջինն է, ֆինանսավորել է տեղական ոչ կառավարական կառույցին համայնքահենք ծառայությունների մատուցման և առաջնային մակարդակով զբաղվածության հնարավորություններին աջակցելու համար: Վերջին երկու տարում տարբեր մասնագիտական ուսուցումներից ուղղակիորեն օգտվել է 521 մարդ, ընդ որում 203-ը ներկայումս ընդգրկված են Երևանի, Գյումրիի և Վանաձորի ուսումնարաններում:

In Gavar, Improving Health Care is a High Priority

April 1, 2016



Driving along Gavar's main street today one passes a building once well-known as "the Birth Center" that now serves as the Regional Medical Center for the entire region of Gegharkunik and its populace of 240,000.

Gavar Medical Center – with its upgraded amenities, technology, equipment and highly qualified and re-trained medical staff – is one of the 14 regional centers that have been modernized throughout Armenia through a series of World Bank-financed [Health Sector Modernization Projects](#) launched in 2004 and completed in February 2016.

With World Bank support, the Government of Armenia took the approach of optimizing resources, without reducing the number of specialists, with a view to providing a full package of high quality medical services to people living outside the capital city of Yerevan.

In 2011, two hospitals in Gavar were merged into one, making it one of the most impressive regional centers in the country, successfully delivering quality healthcare services to the local population as well as to people in adjacent communities.

And, the center is increasingly winning the battle against maternal and child mortality. Doctor Azganush Hovhannisyan, an experienced obstetrician, points out that the re-trained medical staff can now follow women's pregnancies from A to Z, supported with up-to-date equipment and high standards of hygiene.

Gevorg, an 11-year-old boy, was recently admitted to the pediatric department with a severe case of food poisoning. While slowly recovering, he began to enjoy his stay in the hospital, watching TV in a room with an adjoining private bathroom. "We would have never come to the hospital, if not for all these changes, not with an overnight stay", says Mrs. Emma, the boy's grandmother. "Before this, we would either invite the doctor to our home, or we would take the person to the hospital for a checkup only."

Գավառում առողջապահության բարելավումն առաջնահերթություն է

Ապրիլի 1, 2016

Գավառի հիմնական փողոցով մեքենա վարելիս անցնում ենք մի շենքի կողքով, որը ժամանակին հայտնի էր «Ծննդաբերական կենտրոն» անվամբ: Այժմ այն Գեղարքունիքի ողջ մարզի բնակչության համար որպես մարզային բժշկական կենտրոն է ծառայում:

Գավառի բժշկական կենտրոնը՝ իր արդիականացված հարմարություններով, տեխնոլոգիաներով, սարքավորումներով, բարձր որակավորմամբ և վերապատրաստված աշխատակիցներով 2004 թ.-ին մեկնարկած և 2016 թ.-ի փետրվարին ավարտված Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ **«Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրերի»** շարքի միջոցով ողջ Հայաստանում վերագինված 14 մարզային կենտրոններից մեկն է:

Համաշխարհային բանկի աջակցությամբ Հայաստանի կառավարությունը որոշեցրեց ռեսուրսների օպտիմալացման մոտեցում՝ առանց մասնագետների թիվը կրճատելու՝ նպատակ ունենալով մայրաքաղաք Երևանից դուրս բնակվող մարդկանց համար ապահովել բարձրորակ բժշկական ծառայություններ:

2011 թ.-ին Գավառի երկու հիվանդանոցները միավորվեցին մեկում՝ այն դարձնելով երկրի մարզային ամենատպալորիչ հիվանդանոցներից մեկը, որը հաջողությամբ առողջապահական ծառայություններ է մատուցում տեղի, ինչպես նաև հարակից համայնքների բնակչությանը:

Եվ կենտոնն աստիճանաբար հաղթում է մայրական և երեխաների մահացության դեմ մղվող մարտում: Բժշկուհի Ազգանուշ Հովհաննիսյանը՝ փորձառու մանկաբարձը, նշում է, որ վերապատրաստված բուժանձնակազմն այժմ կարող է հետևել հղիության ամբողջ ընթացքին արդի սարքավորումների և հիգիենայի բարձր չափանիշների օգնությամբ:

11-ամյա Գևորգը վերջերս է ընդունվել մանկաբուժական բաժանմունք՝ սննդային սուր թունավորմամբ: Դանդաղ ապաքինման ընթացքում նրան սկսեց դուր գալ հիվանդանոցում մնալը՝ առանձին սան-

հանգույցով հիվանդասենյակում հեռուստացույց դիտելով: «Մենք ոչ մի դեպքում հիվանդանոց չէինք գա, չէինք գիշերի այստեղ, եթե այս բոլոր փոփոխությունները չլինեին: Մինչ այդ մենք կամ բժշկին էինք հրավիրում մեր տուն, կամ միայն հիվանդանոց էինք գնում ստուգման համար»-, ասում է տղայի տատիկը՝ տիկին Էմման:



“We Are Not Alone” A Legal Clinic Provides Essential Service

May 30, 2016



Legal aid in Armenia, as in many places, can be highly costly. For large families, single households with children, the elderly and the unemployed, affording just one sitting of legal advice – never mind the full range of services provided by lawyers – is usually a challenge. This explains the line of people on the second floor of the School of Advocates – where the Pro-Bono Legal Clinic is to be found.

Today, several lawyers are sitting at tables attentively listening to people presenting their documents and their cases.

The Pro-Bono Legal Clinic, well known here in Yerevan and far beyond, provides a glimmer of hope for people throughout the country. Since November 2015, over 500 citizens have received pro-bono legal aid services in the capital, while about 200 citizens living in remote towns and villages have also received assistance – thanks in part to service delivery made available through the World Bank operated [IDF Grant Project on the Strengthening of Training Capacity of the School of Advocates](#).

The Clinic is also closely associated with the legal studies course at the School of Advocates, which has helped introduce new methods of training and modes of communication.

Students have a full range of online courses and support materials which gives them flexibility in choosing when and how to complete a particular course, as most already have other professional assignments

Through its cutting-edge training program, the School is able to attract high-quality professionals and enlarge its pool of practicing lawyers, ultimately providing better and more affordable legal services – and hope – to the poor and less-fortunate in Armenia.

«Մենք միայնակ չենք»

Իրավաբանական կլինիկան անհրաժեշտ ծառայություն է մատուցում

Մայիսի 30, 2016

Հայաստանում իրավաբանական օգնությունը, ինչպես շատ վայրերում, կարող է խիստ ծախսատար լինել: Այն սովորաբար մարտահրավեր է մեծ ընտանիքների, երեխաներ, տարեց և գործազուրկ անդամներ ունեցող միայնակ տնային տնտեսությունների համար, որոնք իրենց կարող են թույլ տալ միայն մեկ իրավաբանական խորհրդատվությունից օգտվել՝ չմտածելով անգամ իրավաբանների կողմից մատուցվող լիարժեք ծառայությունների մասին: Սա էլ բացատրում է Փաստաբանների դպրոցի երկրորդ հարկում մարդկանց հերթի առկայությունը, որտեղ գտնվում է անվճար իրավաբանական կլինիկան:

Այսօր սեղանի մոտ նստած են մի քանի իրավաբաններ՝ ուշադիր լսելով իրենց փաստաթղթերն ու գործերը ներկայացնող մարդկանց:

Անվճար իրավաբանական կլինիկան, որը քաջ հայտնի է Երևանում և դրա սահմաններից դուրս, հուլիսի շող է ողջ երկրի մարդկանց համար: 2015 թ.-ի նոյեմբերից սկսած մայրաքաղաքում շուրջ 500 քաղաքացու մատուցվել են անվճար իրավաբանական օգնության ծառայություններ, իսկ հեռավոր քաղաքներից և գյուղերից աջակցություն է ստացել ևս շուրջ 200 քաղաքացի՝ մասամբ Համաշխարհային բանկի կողմից գործարկված **«Փաստաբանների դպրոցի վերապատրաստման կարողությունների հզորացման դրամաշնորհի ծրագրի»** շնորհիվ:

Կլինիկան նաև սերտորեն կապված է Փաստաբանների դպրոցի իրավաբանական ուսումնասիրությունների դասընթացի հետ, որն օգնել է ուսուցման նոր մեթոդների և հաղորդակցության ձևերի ներդրման հարցում: Ուսանողների համար առկա է առցանց դասընթացների և օժանդակ նյութերի ամբողջական շարք, ինչը նրանց տալիս է ցանկացած դասընթաց ավարտելու ժամանակն ու ձևն ընտրելու ճկունություն, քանի որ մեծ մասն արդեն իսկ մասնագիտական այլ աշխատանքներ ունեն:

Իր գերժամանակակից ուսուցման ծրագրի միջոցով դպրոցը կարողանում է գրավել բարձր որակավորմամբ մասնագետների և ընդլայնել

պրակտիկ գործունեությամբ զբաղվող իրավաբանների շրջանակը՝ ի վերջո ապահովելով ավելի լավ և ավելի մատչելի իրավաբանական ծառայություններ և հույս:



Better, Safer Roads Lead to Improving Lives in Rural Armenia

November 3, 2016



Rotating the wheel to perform vehicular acrobatics around potholes could well have described the drive into Oshakan village in Ararat region not so long ago. On this local road, like on so many other roads in rural Armenia, a driver had to focus hard to ensure the vehicle reached its destination without a puncture or breakdown. Certainly no time to admire the local vistas!

Since 2009, however, Armenia's Government, with support from the World Bank, has been focused on solving these problems – by better connecting rural settlements to the main road networks, and thereby amplifying economic development opportunities for people in these areas. Around 75 rural communities have so far benefitted from rehabilitated roads under this initial investment, which covers a total of 646 kilometers. This has not only led to a better driving experience for rural citizens, but has also created temporary employment for many local people and induced a potential revival in agriculture, tourism, and the economy overall.

The **Lifeline Road Network Improvement Project** is an important part of the effort to improve the access of rural communities to markets and services. So far, it has helped to rehabilitate 208 kilometers of rural roads, bringing the average speed to 40 kilometers per hour, up from 10 kph previously.

Poor road surfaces, combined with other factors such as speeding, have too often been the cause of death and disability, especially to children, in rural Armenia.

Understandably, community members – especially parents – have raised the issue of road safety with Armenia's Roads Directorate, and in response the project has introduced "Safe Village" schemes for 65 communities.

So far, 23 schools and kindergartens in 18 Armenian villages have benefitted from these safety measures.

Բարեկարգ, ապահով ճանապարհները բարելավում են գյուղական կյանքը

Նոյեմբերի 3, 2016

Ոչ վաղ անցյալում Արարատի մարզի Օշական գյուղի ճանապարհը կարող էր նկարագրվել ավտոմեքենայով ակրոբատի պես փոսերը շրջանցելու համար ղեկի պտույտներով: Այս տեղական ճանապարհին, ինչպես և Հայաստանի գյուղերի մի շարք այլ ճանապարհներին, վարորդը պետք է չափազանց ուշադիր լիներ, որպեսզի ավտոմեքենան նախատեսված վայր հասներ առանց անվադողերի ծակվելու կամ մեքենայի խափանման: Իհարկե, ժամանակ չէր մնում տեղի տեսարաններով զմայլվելու համար:

2009 թ.-ից ի վեր սակայն, Հայաստանի կառավարությունը Համաշխարհային բանկի աջակցությամբ, ուշադրությունը կենտրոնացրել է նշված խնդիրների լուծման վրա՝ գյուղական բնակավայրերն ավտոմոբիլային ճանապարհների հիմնական ցանցերին ավելի լավ միացնելով և այդպիսով մեծացնելով այս բնակավայրերի մարդկանց համար տնտեսական զարգացման հնարավորությունները:

Մինչ այժմ սկզբնական ներդրման շրջանակում 646 կմ ընդհանուր երկարությամբ հիմնանորոգված ճանապարհների շահառու են եղել 75 գյուղական համայնք: Այն ոչ միայն հանգեցրել է գյուղացիների համար ավտոմեքենաների վարման ավելի լավ փորձին, այլ նաև ժամանակավոր աշխատանք է ստեղծել տեղացիներից շատերի համար և խթանել գյուղատնտեսության, զբոսաշրջության և առհասարակ տնտեսության հնարավոր աշխուժացումը:

«Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը» շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար բարելավելու ջանքի կարևոր մասն է կազմում: Մինչ այժմ այն օգնել է 208 կմ գյուղական ճանապարհների վերականգնմանը՝ միջին արագությունը դարձնելով ժամում 40 կմ նախկին 10 կմ/ժ-ի համեմատ:

Վատ ճանապարհածածկը, համակցվելով այլ, օրինակ՝ արագության գերազանցման գործոնների հետ, Հայաստանի գյուղերում հաճախ է դարձել մահվան և հաշմանդամության պատճառ, հատկապես՝ երեխաների:

Հասկանալի է, որ համայնքի անդամները, հատկապես ծնողները, Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինության առջև բարձրացրել են ճանապարհների անվտանգության խնդիրը: Արձագանքելով խնդրին՝ ծրագրով 65 համայնքներում ներդրվել է «Անվտանգ գյուղ» համակարգը:

Առ այժմ անվտանգության այս միջոցառումների շահառուներն են եղել Հայաստանի 18 գյուղի 23 դպրոց և մանկապարտեզ:



State-of-the-Art Labs Help Armenian Students and Researchers Pave Way to the Future

April 18, 2017

Tereza Sahradyan is a fifth-year student at Yerevan State Medical University who wants to major in surgery. She takes every opportunity to gain hands-on experience before becoming a professional practicing doctor. That is why the Practical Skills Simulation Training Center, housed at the university, is the perfect training environment for her.

Opened just three years ago, the Center has 16 rooms that are designed to mirror real hospital conditions. Here, students can practice different medical scenarios on electronically controlled mannequins and models that simulate physiological symptoms, and respond to the students' actions.

In the Center, students study patients' records, handle diverse medical cases that replicate actual healthcare settings, and propose treatment options. When an action is taken correctly, the simulators respond and the screen shows that the heart has regained its ability to function properly.

"Here, they can make a mistake a dozen times and that is fine, acceptable, but in real life they won't have this option," says Suren

Hovhannisyan, DMedSc, Head of the Center.

Similar to the Medical University, the Department of Biology at Yerevan State University (YSU) also strives to maintain quality assurance and train students in accordance with current labor market needs. To this end, the university established the Innovative Center for Bacteriological Biotechnologies and Biofuel.

Karen Trchunyan, the Innovative Center coordinator, describes how every piece of equipment was acquired and notes with pride that all of them are modern and extremely accurate.

"We did not have such facilities in the past," says Karen, "while our graduates used to end up in various laboratories and companies where they had to work with methodologies and technologies they weren't familiar with. Now, they can confidently enter the labor market."

To facilitate networking with manufacturers and to expand research opportunities, YSU opened another Center of Excellence for Applied Biosciences three years ago. The Center promotes inter-professionalism and inter-subject correlation, by bringing together various professionals such as archaeologists and agrarians. Armenian scientists can now conduct research that previously could only be done abroad.

These state-of-the-art labs, now found in universities all across Armenia, have been established with support from World Bank-financed education projects.

The Competitive Innovative Fund for Higher Education in Armenia was initially established under the [Second Education Quality and Relevance Project](#). Subsequently, through a highly competitive process, the Fund disbursed grant resources to 10 universities throughout 2013-15. Thanks to the Education Improvement Project, a number of grants have recently been awarded to higher education institutions, with another 12 labs due to open by the end of 2017.



Ժամանակակից լաբորատորիաներն ուսանողներին օգնում են հարթել ապագայի ճանապարհը

Ապրիլի 18, 2017

Թերեզա Սահրադյանը Երևանի պետական բժշկական համալսարանի հինգերորդ կուրսի ուսանող է վիրաբուժություն մասնագիտությամբ: Նա ամեն հնարավորությունից օգտվում է նախքան պրակտիկ բժիշկ դառնալը գործնական փորձ ձեռք բերելու համար: Համալսարանում գտնվող Գործնական հմտությունների սիմուլյացիոն կենտրոնը կատարյալ ուսումնական միջավայր է նրա համար:

3 տարի առաջ բացված կենտրոնն ունի 16 սենյակ, որոնք նախագծված են իրական հիվանդանոցային պայմանների կրկնօրինակով: Այստեղ ուսանողները կարող են կիրառել տարբեր բժշկական սցենարներ էլեկտրոնային ձևով կառավարվող մանեկենների և մոդելների վրա, որոնք նմանակում են ֆիզիոլոգիական ախտահիշները և արձագանքում են ուսանողների գործողություններին: Կենտրոնում ուսանողներն ուսումնասիրում են հիվանդների տվյալները, զբաղվում են տարբեր բժշկական դեպքերով, որոնք կրկնում են իրական առողջապահական միջավայրն ու առաջարկում են բուժման տարբերակներ: Երբ ճիշտ գործողություն է կատարվում, սիմուլյատորներն արձագանքում են, և էկրանը ցույց է տալիս, որ սիրտը վերագտել է պատշաճ աշխատելու իր ունակությունը: «Այստեղ նրանք կարող են տասն անգամ սխալվել և դա ընդունելի է, սակայն իրական կյանքում նրանք այդպիսի տարբերակ չեն ունենա», - ասում է կենտրոնի ղեկավար, բժիշկ Սուրեն Հովհաննիսյանը:

Ինչպես Բժշկական համալսարանը, այնպես էլ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) կենսաբանության ֆակուլտետը ձգտում է պահպանել որակի ապահովումն ու ուսանողներին պատրաստել աշխատաշուկայի ներկա կարիքներին համապատասխան: Այս նպատակով համալսարանում ստեղծվել է Մանրեաբանական կենսատեխնոլոգիաների և կենսավառելիքի նորարարական կենտրոն: Նորարարական կենտրոնի համակարգող Կարեն Թեջոնյանը նկարագրում է, թե ինչպես է ձեռք բերվել յուրաքանչյուր սարքավորում և հպարտությամբ նշում, որ դրանք բոլորը ժամանակակից են և չափազանց

ճշգրիտ: «Մենք նման հնարավորություններ անցյալում չունեինք: Մեր շրջանավարտները հայտնվում էին տարբեր լաբորատորիաներում և ընկերություններում, որտեղ ստիպված էին աշխատել մեթոդաբանությամբ և տեխնոլոգիաներով, որոնց հետ ծանոթ չէին: Այժմ նրանք վստահորեն կարող են մտնել աշխատաշուկա», - ասում է Կարենը:

Արտադրողների հետ կապերի հաստատումը խթանելու և հետազոտական հնարավորություններն ընդլայնելու համար ԵՊՀ-ն 3 տարի առաջ բացել է Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոն: Ժամանակակից 10 լաբորատորիան, որ ստեղծվել է Հայաստանի համալսարաններում, հիմնադրվել է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող կրթական ծրագրերի աջակցությամբ:


Վերջերս բուհերին են շնորհվել մի շարք դրամաշնորհներ, մինչև 2017 թ.-ի ավարտը նախատեսվում է բացել ևս 12 լաբորատորիա:




25 Years Timeline: Armenia and the World Bank Group



WORLD BANK GROUP





Twenty-Five Years of Partnership!

September 2017

The excerpts in this book are from stories published over the years about World Bank supported projects in Armenia.

Գրքում ներառված հատվածները տարիներ շարունակ
Հայաստանում Համաշխարհային բանկի աջակցությամբ
իրականացված ծրագրերի մասին պատմություններից են:

9 Grigor Lousavorich St.,
Yerevan 0015, Armenia
Tel.: +374 10 52 09 92

Գրիգոր Լուսավորչի 9,
Երևան 0015, Հայաստան
Հեռ.՝ +374 10 52 09 92



Follow us on Facebook / Հետևեք մեզ Ֆեյսբուքում
[@WorldBankArmenia](https://www.facebook.com/WorldBankArmenia)

Visit us / Այցելեք մեզ
www.worldbank.org/armenia